



ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔ-ՁԵՎԱԶՈՓ

ՄԱՍ 1

Լրացված է՝ հիմք ընդունելով Ծրագրի նպատակը, խնդիրները՝ օգտվելով համապատասխան լիազոր մարմինների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, շրջակա միջավայրի նախարարությունների, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներից, Սյունիքի մարզպետարանի և համայնքի կայքերից, Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) տվյալներից, Տարածքային զարգացման հիմնադրամի կայքից, «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից փոքր ՀԷԿ-երի և հանքարդյունաբերական ընկերությունների ոլորտներում կատարված ուսումնասիրությունների տվյալների բազայից, պաշտոնական այլ փաստաթղթերից և ստորագրված պայմանագրերից:

Ընդհանուր տվյալներ համայնքի մասին

Մարզ- Սյունիք

Համայնք Գորիս

Համայնքի ղեկավար Առուշ Առուշանյան, հեռախոս՝ 043-600600, աշխատակազմի քարտուղար՝ Լուսինե Ղուկասյան՝ 094-320203, համայնքի էլեկտրոնային կայք՝

<http://www.goriscity.am/>

Համայնքի ավագանին՝ 14 անձ

Համայնքի ավագանու անդամներ (անուն, ազգանուն)՝

1. Լյովա Արզանյան, 2. Գրիգոր Կարապետյան, 3. Մասիս Ղևոնդյան, 4. Սամվել Մաքունց, 5. Ոսկան Ոսկանյան, 6. Դավիթ Դոլունց, 7. Ռուստամ Ակլունց, 8. Գարիկ Գևորգյան, 9. Էրիկ Աղաջանյան, 10. Նարեկ Պրոդյան, 11. Գուրգեն Հակոբյան, 12. Մհեր Արզումանյան, 13. Արմեն Մկրտչյան, 14. Արարատ Աղաբեկյան

Գորիս համայնքի բնակավայրերի բնակչության թիվն ըստ համայնքի զարգացման վերջին ծրագրի՝

Ընդհանուր թիվը՝ 28495 բնակիչ, որից Գորիս՝ 21432, Ակներ՝ 1115, Բարձրավան՝ 121, Հարթաշեն՝ 694, Խնձորեսկ՝ 2013, Ներքին Խնձորեսկ՝ 253, Շուռնուխ՝ 153 (Աղբուլաղ, Ձորակ և Վանանդ, բնակավայրերն ընդգրկված են Շուռնուխի կազմում), Ռոռտան՝ 281, Վերիշեն՝ 2113, Քարահունջ՝ 1358:

Համայնքի սոցիալական, տարիքային, գենդերային պրոֆիլ

Համայնքի բնակչության ընդհանուր թիվն, ըստ Գորիսի համայնքապետարանի պաշտոնական կայքի¹, 2021թ. սեպտեմբերի դրությամբ կազմում է 28495 մարդ, որից արական՝ 14091 մարդ, իգական՝ 14404 մարդ: Տարիքային կազմը՝ 0-6 տարեկան՝ 1364 մարդ, 7-17 տարեկան՝ 3692 մարդ, 18-65 տարեկան՝ 19802 մարդ, 66 և ավելի տարեկան՝ 3637 մարդ: Կենսաթոշակառուների թիվը՝ 2819:

Ըստ Սյունիքի մարզպետարանի կայքի² նպաստառու ընտանիքների թիվը 2020թ. սեպտեմբեր ամսին կազմել է 543, այդ թվում՝ Գորիս՝ 332 Ակներ՝ 34, Բարձրավան՝ 3, Խնձորեսկ՝ 40, Հարթաշեն՝ 15, Ներքին Խնձորեսկ՝ 7, Շուռնուխ՝ 5, Որոտան՝ 8, Վերիշեն՝ 42 և Քարահունջ՝ 57: Իսկ սոցիալական նպաստ է ստանում 270 հոգի:

Գրանցված գործազուրկների թվաքանակը՝ 574 հոգի:

Տնային տնտեսությունների թիվը 6982 է, որից 1 շնչից կազմած է՝ ամբողջ տնտեսությունների 17%-ը:

Համայնքում գործում են առողջապահական հետևյալ հաստատությունները՝

Գորիս քաղաքում՝ Գորիս բժշկական կենտրոն ՓԲԸ-ն, Հայ-Ֆրանսիական սրտաբանական կենտրոնը, Արյան փոխներարկման կայանը, Վերիշենում՝ Վերիշենի բուժամբուլատորիա» ՓԲԸ-ն, Խնձորեսկում՝ բուժամբուլատորիա, մնացած բնակավայրերում՝ բուժկետեր:

Գորիս համայնքի դպրոցական հաստատություններ

Համայնքում կա 2 ավագ դպրոց, 4 հիմնական և 9 միջնակարգ դպրոց:

Գորիս քաղաքում՝ 2 ավագ դպրոց:

Գորիս համայնքի նախադպրոցական հաստատություններ

Համայնքում գործում է 11 նախադպրոցական ուսումնական հաստատություն:

Գորիս համայնքի հիմնական արդյունաբերական (արտադրական) ոլորտներն են՝

Էլեկտրաէներգիայի արտադրություն՝ փոքր ՀԷԿ-եր, շինանյութերի արտադրություն, մասնավորապես, մետաղյա կոնստրուկցիաների, սենդվիչների արտադրություն, մանածագործական արտադրություն, 3D տպիչների արտադրություն, սննդի, սննդամթերքի և գյուղմթերքի զովացուցիչ ըմպելիքների, գարեջրի, կաթի, կաթնամթերքի, կահույքի, էլեկտրական սարքավորումների արտադրություններ:

Արտադրված արտադրանքը հիմնականում սպառվում է ներքին շուկայում, ՀՀ տարածքում, ԵՄ, ԵՏՄ երկրներում:

Բնակչության հիմնական զբաղմունքը

Գյուղատնտեսական հումքի մշակում, Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում, շինարարություն, առևտուր, գյուղատնտեսական ծառայությունների մատուցում, հյուրանոցային և ռեստորանային ծառայություններ, տրանսպորտ և կապ, տեղական ինքնակառավարում, կրթություն, այդ թվում՝

¹ <http://www.goriscity.am/Pages/Registry/Demographic/DemographicMain.aspx>

² <https://syunik.mtad.am/ynt.npast/>

նախադարձական կրթություն, առողջապահություն և սոցիալական ծառայություն, կոմունալ, սոցիալական և անհատական ծառայություններ, աշխատողներ ՀՈԱԿ-ներում, պետական մարմիններում, հասարակական միավորումներում:

Համայնքը զբաղեցնում է 33604,01 հա տարածք:

Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը 23656 հազար հա է, որից Գորիս՝ 4035 հա, Ակներ՝ 3733 հա, Բարձրավան՝ 995 հա, Խնձորեսկ՝ 6223 հա, Հարթաշեն՝ 2902 հա, Ներքին Խնձորեսկ՝ 577 հա, Շուռնուխ՝ 720 հա, Որոտան՝ 75 հա, Վերիշեն՝ 4396 հա:

Համայնքի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության և էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի մակերեսը՝ 107հա + 76 հա, որից Գորիս՝ 49հա +5 հա, Ակներ՝ 7հա +2 հա, Բարձրավան՝ 3հա +2 հա, Խնձորեսկ՝ 12հա +13 հա, Հարթաշեն՝ 14 հա + 4 հա, Ներքին Խնձորեսկ՝ 4 հա +1 հա, Շուռնուխ՝ 3 հա, Որոտան՝ 3 հա ,Վերիշեն՝ 8 հա + 4 հա:

Համայնքի էներգետիկ և ընդերքօգտագործման նշանակության հողերի վարձակալության դիմաց ստացված տեղական բյուջեի մուտքերը տարեկան կտրվածքով կազմում է 7,5 մլն. դրամ:

Անտառապատ հողեր և անտառապատվածություն՝

Ըստ Սյունիքի մարզպետարանի կայքի՝ Գորիս համայնքի անտառային հողերի մակերեսը կազմում է 4513 հա, որից անտառածածկ՝ 3961 հա (87,76 %):

Ըստ բնակավայրերի այն կազմում է. Գորիս՝ անտառային հողեր՝ 255 հա, որից անտառածածկ՝ 255 հա, Ակներ՝ անտառային հողեր՝ 130 հա, որից անտառածածկ՝ 129 հա, Բարձրավան՝ անտառային հողեր՝ 1765 հա, որից անտառածածկ՝ 1544 հա, Խնձորեսկ՝ անտառային հողեր՝ 474 հա, որից անտառածածկ՝ 387 հա, Հարթաշեն՝ անտառային հողեր՝ 107 հա, որից անտառածածկ՝ 88 հա, Շուռնուխ՝ անտառային հողեր՝ 1563 հա, որից անտառածածկ՝ 1422 հա, Որոտան՝ անտառային հողեր՝ 181 հա, որից անտառածածկ՝ 98 հա, Քարահունջ՝ 38հա, որից անտառածածկ՝ 38հա, Վերիշեն՝ չունի, Ներքին Խնձորեսկ՝ չունի:

Համայնքի ուժեղ կողմերն են՝

Մեծ թվով բնական ու տեխնածին հուշարձանները համայնքի սահմաններում և հարակից շրջաններում, ռազմավարական աշխարհագրական դիրքը՝ որպես տրանսպորտային և տնտեսական հանգույց, հյուրանոցների ու հյուրատների առկայությունը, կրթական, առողջապահական, մշակութային հաստատությունների առկայությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները, առկա ու նախատեսվող ինժեներական լաբորատորիաները, բերրի հողերը, հասանելի մեծաքանակ հողային ռեսուրսները, արոտավայրերի, խոտհարքների առկայությունը, քաղաքին կից անտառային ծածկույթի և տնամերձ այգիների առկայությունը:

Համայնքի թույլ կողմերն են՝

Թույլ զարգացած ենթակառուցվածքները, զբոսաշրջությանը սպասարկող ծառայությունների և ենթակառուցվածքների պակասը, աղբահանության անբավարար վիճակը, կեղտաջրերի մաքրման կայանի բացակայությունը, ժամանակակից գյուղատնտեսության մոտեցումների ոչ բավարար կիրառումը, ջերմոցային կուլտուրաների և ոռոգման համակարգերի անբավարար զարգացվածությունը:

Համայնքի վարչական տարածքում մետաղական հանքավայրեր շահագործող կամ վերամշակող կազմակերպություններ (կազմակերպություն, արդյունահանվող կամ վերամշակվող հանքաքար) **չկան:**

Համայնքի վարչական տարածքում ոչ-մետաղական հանքավայրեր շահագործող կազմակերպություններ (կազմակերպություն, արդյունահանվող կամ վերամշակվող հանքաքար)

Ըստ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ 30.06.2021 թ. դրությամբ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին տեղեկատվության՝ գործում են՝

1, «ՀԻԴՐՈԳԵՈՇԻՆ» ՍՊԸ-ն, որը շահագործվում է Գորիսի բազալտի հանքավայրը, թույլտվություն՝ ՇԱԹ-29/629, թույլտվության ժամկետ՝ 21.10.2020թ.-21.10.2070թ., հանքի մակերեսը՝ 5,23 հա, տարեկան թույլատրելի արդյունահանվող պաշարը՝ 6155,0 խմ բազալտ: Ընկերությունը համայնքի նկատմամբ ստանձնել է 0,220 մլն. դրամ գումարով սոցիալական պարտավորություն:

2, «ԱԿՆԵՐ» ՍՊԸ-ն, որը շահագործում է Քար Թափի բազալտի հանքավայրը, թույլտվություն՝ ՇԱԹՎ-29/291, ժամկետը՝ մինչև 28.11.2036թ., հանքի մակերեսը՝ 1,06 հա, տարեկան թույլատրելի ծավալը՝ 75.0 հազ.մ³ բազալտ: Ընկերությունը համայնքի նկատմամբ սոցիալական պարտավորություն չի վերցրել:

Համայնքի վարչական տարածքում շահագործվող ՀԷԿ/ՓՀԷԿ-եր (ՓՀԷԿ-ի շահագործող ընկերության կամ ՀԷԿ-ի անվանումը, տեղակայման գետը, կամ համակարգը) և այլ բնութագրիչներն են՝

1. «Որոտան» հիդրոէլեկտրակայանների համակարգը բաղկացած է 3՝ Տաթև, Սպանդարյան և Շամբ ՀԷԿ-երից, որոնք տեղաբաշխված են Որոտան գետի և վտակների վրա: Համակարգի հիդրոէլեկտրակայանների ընդհանուր սխեման ունի հետևյալ տեսքը. համակարգի գլխամասային Սպանդարյան ջրամբարից ճնշման թունելով ջուրը հասնում է «Սպանդարյան» ՀԷԿ: ՀԷԿ-ից ներքև կառուցված է Անգեղակոթի պատվարը, որը կազմավորում է Անգեղակոթի ջրամբարը: Այս ջրամբարից ոչ ճնշման թունելով ջուրը տեղափոխվում է Սիսիան և Այրի վտակների վրա կազմավորված Տոլրսի ջրամբար: Տոլրսի ջրամբարից ճնշման թունելով ջուրը տրվում է «Շամբ» ՀԷԿ-ի՝ կայանից ներքև կառուցված Տաթև ջրամբարը:

Մարգարտաձաղկի տեսք ունեցող հազվագյուտ ջրթափ կառույցով: Տաթևի ջրամբարից ոչ ճնշման թունելով ջուրը հասնում է օրվա կարգավորման ջրավազան, որտեղից էլ տուրբինային խողովակաշարով՝ «Տաթև» ՀԷԿ: ՀՀ կառավարության 21.11.2013թ. №1496-Ա որոշմամբ «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ի գույքային համալիրի հիմնական մասն օտարվեց «Քոնթուր Գլոբալ ՀիդրոԿասկադ» ՓԲԸ-ին:

«Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն 2019թ. 12 ամսում արտադրել և իրացրել է 17027705, 9 հազ. դրամ ապրանքային արժեքով 983, 643,900 ՄԳ/ժ էլեկտրաէներգիա (2020թ. ութ ամսում 345,524,799 կՎտժ էլեկտրաէներգիա):

Համայնքի տարածքում գործունեություն իրականացնող ՓՀԷԿ/ՀԷԿ-երի վերաբերյալ

1. «Վ.Ա.Լ.» փոքր ՀԷԿ-ը գտնվում է Գորիս քաղաքի վարչական տարածքում: ՓՀԷԿ-ը կառուցված է Գորիս (Վարարակ) գետի վրա (երկարությունը՝ 29 կմ): ՓՀԷԿ-ը շահագործում է «Վ.Ա.Լ. ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ն: Ունի ցածր տնտեսական շահավետություն: ՓՀԷԿ-ի հիդրոէներգետիկ սարքավորումներն ունեն ցածր տեխնիկական արդյունավետություն: ՓՀԷԿ-ի աշխատանքն անարդյունավետ է և չի կարող ապահովել մեծ շահութաբերություն, հետևապես, այս վիճակով համայնքը չի կարող ակնկալել սոցիալական աջակցություն ՓՀԷԿ-ից: ՓՀԷԿ-ի նախագծման աշխատանքներում հաշվի չեն առնվել ռոտզման ջրապահանջները և ռոտզման ռեժիմները: Փոքր ՀԷԿ-ի պատվարից վերև 2 և պատվարից ներքև 3 կետերից ռոտզման նպատակով իրականացվում է ջրառ: Չնայած պատասխանատուները պնդում են, որ ինչպես ռոտզման սեզոնին (4 ամիս), այնպես էլ հեղեղների ժամանակ ՓՀԷԿ-ի աշխատանքները դադարեցվում են, այնուամենայնիվ, գետից ռոտզում իրականացնող անձանց իրավունքները խախտված են, քանի որ, ըստ ՀՀ Ջրային օրենսգրքի, գետից էլեկտրաէներգիային արտադրության նպատակով ջրառը ստորադասված է ռոտզման նպատակով ջրառին:

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի համաձայն՝ 2019թ-ին տարվա 12 ամիսների ընթացքում ՓՀԷԿ-ն արտադրել է 10064,6 հազ. դրամ ապրանքային արժեքով 348,700 կվտ.ժ էլեկտրաէներգիա, իսկ 2020թ. ութ ամսում՝ 176,399 կվտ.ժամ:

2.«Որոտնա ՀԷԿ» փոքր ՀԷԿ, գտնվում է Որոտան բնակավայրի վարչական տարածքում: ՓՀԷԿ-ը կառուցված է Որոտան գետի վրա (երկարությունը՝ 178 կմ): ՓՀԷԿ-ը շահագործում է «Հակոբջանյանի և Գալստյանի ՀԷԿ» ՍՊԸ-ն: ՍՊԸ-ից հնարավոր է ակնկալել սոցիալական աջակցություն՝ Որոտան բնակավայրի զարգացման նպատակով: Ըստ ջրօգտագործման թույլտվության՝ «Որոտնա ՀԷԿ» ՓՀԷԿ-ը տարվա 12 ամիսների ընթացքում կարող է իրականացնել 79603.0 հազար խմ ջրառ՝ գետում ապահովելով 1.1խմ/վ բնապահպանական թողք:

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի համաձայն՝ 2019թ-ին տարվա 12 ամիսների ընթացքում ՓՀԷԿ-ն արտադրել է 239810,0 հզ. դրամ ապրանքային արժեքով 8,301,000 կվտ.ժ էլեկտրաէներգիա (2020թ. ութ ամսում՝ 5,673,440 կվտ.ժ):

3. «Բենգար Էներջի» փոքր ՀԷԿ-ը գտնվում է Որոտան և Վաղատին բնակավայրերի վարչական տարածքներում: ՓՀԷԿ-ը կառուցված է Որոտան գետի Ջոր-Ջոր վտակի վրա (ըստ ՀՕԿՀ-ի՝ Վաղուդ վտակի վրա) (երկարությունը՝ 12 կմ): ՓՀԷԿ-ը տարվա բոլոր ամիսների ընթացքում Որոտան գետից վերցնում է 1293.0 հազար խմ ջուր՝

ապահովելով 0.03մ³/վ բնապահպանական թողք: ՓՀԵԿ-ի խողովակաշարի երկարությունը, 640 մ է, տրամագիծը՝ 0.8մ: Արված է բավարար ռելուլտիվացիա: Գետի ջուրն օգտագործվում է նաև ոռոգման և խմելու նպատակով: ՓՀԵԿ-ն ամբողջ հզորությամբ չի աշխատում: Ոռոգման սեզոնին (մոտ 5 ամիս՝ մայիս-սեպտեմբեր) ապահովում է 50կՎտ, մնացած ամիսներին՝ 150 կՎտ: Ոռոգման ջրառն իրականացվում է ՓՀԵԿ-ից մոտ 500մ վերև: ՓՀԵԿ-ը ոռոգման համար խոչընդոտ չի առաջացնում: ՓՀԵԿ-ից վերև ոռոգում են իրականացնում Որոտան և Շամբ համայնքները: ՓՀԵԿ-ից վերև ջրառ է իրականացնում «Շամբ» ՓՀԵԿ-ը:

Զոր-Զոր գետի վրա կառուցված «Բենգար Էներջի», «Զոր-Զոր ՀԵԿ-1» և «ԶՈՐ-ԶՈՐ-2» ՓՀԵԿ-երի դերիվացիայի գումարային երկարության (3105 մ) տոկոսային հարաբերությունը գետի երկարության հետ կազմում է 25.875%:

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի համաձայն՝ 2019թ-ին տարվա 12 ամիսների ընթացքում արտադրել է 23152, 3 հազ. դրամ ապրանքային արժեքով 888,000 կվտ.ժ էլեկտրաէներգիա (2020թ. ութ ամսում՝ 875.766 կվտ.ժ):

4. «Քարահունջ» փոքր ՀԵԿ-ը գտնվում է Քարահունջ բնակավայրում: ՓՀԵԿ-ը կառուցված է Գորիս գետի (Վարարակ) վրա (երկարությունը՝ 29 կմ): «Քարահունջ» ՓՀԵԿ-ը շահագործում է «ՔԱՐԱՀՈՒՆՋ ՀԵԿ» ՍՊԸ-ն: ՓՀԵԿ-ը տարվա բոլոր ամիսներին Գորիս գետից վերցնում է 29.98 միլիոն մ³ ջուր՝ գետում ապահովելով 0.04մ³/վ բնապահպանական թողք: ՓՀԵԿ-ի խողովակաշարի երկարությունը, ըստ ՀԾԿՀ-ի, 1740,0մ, 1224,0 մ է: Խողովակաշարի տրամագիծը 1,2մ, 1,0մ է: ՓՀԵԿ-ից վերև գտնվող գետահատվածում Ակներ, Գորիս, Վերիշեն, Քարահունջ համայնքների կենցաղային աղբը և կոյուղաջրերը լցվում են գետը՝ ստեղծելով հակասանիտարական վիճակ և նպաստում սարքավորումների կոռոզիային: ՓՀԵԿ-ում աշխատում է 8 հոգի Գորիս և Քարահունջ բնակավայրերից:

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի համաձայն՝ 2019թ-ին տարվա 12 ամիսների ընթացքում ՓՀԵԿ-ն արտադրել է 241870,0 հազ. դրամ ապրանքային արժեքով 8,380.800 կվտ.ժ էլեկտրաէներգիա (2020թ. ութ ամսում՝ 5,296.81 կվտ.ժ):

5.«ՍԵԿԱ» փոքր ՀԵԿ-ը գտնվում է Քարահունջ համայնքում: ՓՀԵԿ-ը կառուցված է Որոտանի վտակ Վարարակ գետի վրա (երկարությունը՝ 29 կմ): «ՍԵԿԱ» ՓՀԵԿ-ը շահագործում է «ԿԱՐԱՀՈՒՆՋ ՎԱՍ» ՍՊԸ-ն: «Սեկա» ՓՀԵԿ-ը ՋԹ-ով Վարարակն գետից վերցնում է տարեկան 25.4 միլիոն խմ ջուր՝ գետում ապահովելով 0.035 մ³/վ բնապահպանական թողք: Ըստ ՀԾԿՀ-ի՝ ՓՀԵԿ-ի խողովակաշարի տրամագիծն է՝ 1,2մ, 1,0մ, երկարությունը՝ 1450,0 մ, 1200,0 մ, երկարությունը՝ 1450,0 մ, 1200,0 մ: ՓՀԵԿ-ում աշխատում է 10 հոգի Քարահունջից և Գորիսից:

«Սեկա» ՓՀԵԿ-ի ջրառից որպես սոցիալական ծրագիր իրականացվում է ոռոգում ՓՀԵԿ-ի սեփականատիրոջ նախաձեռնությամբ: Ըստ «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կայքի³՝ 2019թ. 12 ամսում արտադրել և իրացրել է 194120,0 հազ. դրամ ապրանքային արժեքով 6,735,800 կվտ.ժ էլեկտրաէներգիա (2020թ. ութ ամսում՝ 4,215,048 կվտ.ժ էլեկտրաէներգիա):

6. Վարարակն» փոքր ՀԵԿ-ը գտնվում է Գորիս քաղաքում: ՓՀԵԿ-ը կառուցված է Վարարակն (Գորիս) գետի վրա (երկարությունը՝ 29 կմ): «Վարարակն» ՓՀԵԿ-ը շահագործում է «Խ և Մ ընկերներ» ՍՊԸ-ն: Ըստ Հանրային ծառայությունները

³ <https://setcenter.am/uploads/pages/6/b7820cdc8f5a79310ad9141100474643.pdf>

կարգավորող հանձնաժողովի և նախագծի՝ ՓՀԵԿ-ի խողովակաշարի երկարությունը 2263մ է, տրամագիծը՝ 0.7մ: Ըստ ՋԹ-ի՝ կարող է իրականացնել 16.30 միլիոն մ³ ջրառ՝ գետում ապահովելով 0.05մ³/վ բնապահպանական թողք: «Վարարակն» ՓՀԵԿ-ը ապահովում է նախագծային հզորությունը՝ օգտագործելով առավելագույնը 800-700լ/վրկ ջուր: Ջրի սակավության պատճառով, ըստ ՓՀԵԿ-ի պատասխանատուների, հուլիս-օգոստոս ամիսներին ՓՀԵԿ-ի աշխատանքը սովորաբար կանգնում է: ՓՀԵԿ-ում աշխատում է 6 հոգի Գորիս քաղաքից: ՓՀԵԿ-ի կողմից օգտագործվող գետահատվածում ոռոգում չի իրականացվում: «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի համաձայն՝ 2019թ-ին տարվա 12 ամիսների ընթացքում ՓՀԵԿ-ն արտադրել է 128693, 5 հազ. դրամ ապրանքային արժեքով 4,457,000 կվտ.ժ էլեկտրաէներգիա, իսկ 2020 թվականի ութ ամսում՝ 2.824,81 կվտ.ժ:

Վարարակ գետի վրա կառուցված «Վարարակն», «Քարահունջ», «Վ.Ա.Լ.» և «Սեկա» ՓՀԵԿ-երի դերիվացիայի գումարային երկարության (8457.7մ) տոկոսային հարաբերությունը գետի երկարության հետ կազմում է 29.16 %:

Համայնքի տարածքում արտադրական թափոնների և հանքարդյունաբերական լցակույտերի առկայությունը

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կայքում այդ տվյալների մասին հղումներ չկան:

Համայնքի սոցիալական և բնապահպանական բացահայտված խնդիրներն՝ ըստ համայնքի անձնագրի և սոցիալ-տնտեսական զարգացման վերջին գործող ծրագրի

Գործազրկության մակարդակը Գորիս քաղաքային բնակավայրում կազմում է 16,5%, 4.1%՝ ըստ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2019» հրապարակման⁴: Համայնքում ընտանեկան նպաստի համակարգում փաստագրված տնային տնտեսությունների քանակը 2020 թվականի սեպտեմբերի դրությամբ կազմել է 543 (այդ թվում՝ Գորիս՝ 332, Ակներ՝ 34, Բարձրավան՝ 3, Խնձորեսկ՝ 40, Հարթաշեն՝ 15, Ներքին Խնձորեսկ՝ 7, Շուռնուխ՝ 5, Որոտան՝ 8, Վերիշեն՝ 42 և Քարահունջ՝ 57: Իսկ սոցիալական նպաստ են ստանում 225 հոգի:

- Բնակչության զբաղվածության ցուցանիշը կազմում է 8416 հոգի:

Ոռոգման և խմելու ջրերի հասանելիությունը

Ըստ Գորիսի 2018-2022թթ. զարգացման ծրագրի՝ պետության կողմից գալիք հինգ տարիների համար նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային ծրագրերի ու միջոցառումների թվում է Որոտանում ոռոգման համակարգի կառուցումը (կաթիլային համակարգի և ժամանակակից ոռոգման համակարգի ներդրում):

Գորիս համայնքի զարգացման հիմնական խոչընդոտներից է՝ ոռոգման ջրի՝ ցանցերի, ջրամբարի, կաթիլային ոռոգման համակարգի, ժամանակակից մեթոդների

⁴ <https://armstat.am/am/?nid=82&id=2217>

ոչ բավարար կիրառումը: Համայնքի թույլ կողմերից է ոռոգման համակարգերի անբավարար զարգացվածությունը:

Ըստ Գորիսի 2018-2022թթ. զարգացման ծրագրի՝ պետության կողմից գալիք հինգ տարիների համար նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային ծրագրերի ու միջոցառումների թվում են՝ Վերիշենում, Ակներում, Քարահունջում խմելու ջրի ներքին ցանցի նորոգումը, Խնձորեսկում՝ խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցումը, Էներգախնայող լամպերով բնակավայրերի գիշերային լուսավորության ապահովում, համայնքների աղբահանության պատշաճ կազմակերպում, Գորայք համայնքի հետ մեկտեղ աղբավայրի հիմնում....., շուրջ 22 ծրագիր:

2020թ-ի դրությամբ համայնքի բնապահպանական բնութագիրն՝ ըստ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի⁵ և պաշտոնական և ոչ պաշտոնական այլ աղբյուրների

- **Համայնքի մթնոլորտային օդի որակը**

Ինչպես Գորիս քաղաքում, այնպես էլ համայնքի մնացած բնակավայրերում ՊՈԱԿ-ը⁶ օդի որակի և աղտոտիչների բաղադրության չափումների դիտակետեր չունի և չափումներ չի իրականացնում:

- **Համայնքի տարածքով հոսող գետերի աղտոտվածության մակարդակը**

Ըստ Գորիսի 2018-2022թթ. զարգացման ծրագրի՝ Վարարակ գետն անմխիթար սանիտարական վիճակում է՝ գյուղական համայնքներից կոյուղաջրերի և ապօրինի աղբաթափմամբ պայմանավորված:

«Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի համաձայն՝ 2020 թվականին Վարարակ գետի ջրի որակը Գորիս քաղաքից վերև և ներքև ընկած հատվածներում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ իոններով, մանգանով, կոբալտով, երկաթով և կախյալ նյութերով: 5 կմ ք. Գորիսից վերև գտնվող 106 դիտակետի տարածքում գետում հայտնաբերվել է Ֆոսֆատ իոն՝ 3-րդ դաս, բերիլիում, ալյումին, ընդհանուր ֆոսֆոր՝ 4-րդ դաս, մանգան, կոբալտ, երկաթ, կախյալ նյութեր՝ 5-րդ դաս: 1.5 կմ Գորիսից ներքև 107 դիտակետ՝ մոլիբդեն, կոբալտ, երկաթ, կալցիում, կալիում՝ 3-րդ դաս, նիտրիտ իոն, մանգան, ընդհանուր անօրգանական ազոտ (ԸԱԱ,) ընդհանուր ֆոսֆոր, կախյալ նյութեր՝ 4-րդ դաս, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն՝ 5-րդ դաս:

⁵ <http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekang/tarekan/Annual-2020.pdf>

⁶ <http://armmonitoring.am/page/61>

2021 թվականի մարտին 106 և 107 (Գորիսգետ) դիտակետերում կատարված չափագրումների արդյունքում պարզվել է, որ գետի ջրի որակը Գորիս քաղաքից վերև և գետաբերանի հատվածներում չի փոխվել և այն գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Վարարակ գետի ջրի որակը Գորիս քաղաքից վերև ապրիլ և մայիս ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Գետաբերանի հատվածում գետի ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Հողերի աղտոտվածության մակարդակը

Ինչպես Գորիս քաղաքում, այնպես էլ համայնքի մնացած բնակավայրերում ՊՈԱԿ-ը հողերում աղտոտիչների բաղադրության չափումներ չի իրականացնում <http://www.armmonitoring.am/page/29>

Ըստ Գորիսի 2018-2022թթ. զարգացման ծրագրի՝ պետության կողմից գալիք հինգ տարիների համար նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային ծրագրերից ու միջոցառումներից են՝ Որոտանում, Ներքին Խնձորեսկում աղբահանության կազմակերպումը: Միջհամայնքային, միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ և մասնավոր ընկերությունների կողմից իրականացվող ծրագրերի թվում՝ (ԵՄ ֆինանսավորում, «Ուրբան» հիմնադրամ) «Մաքուր դաշինք. Մատչելի ծառայություններ Գորիս և Գորայք բազմաբնակավայր համայնքներին» ծրագրի շրջանակներում աղբահանության մեխանիզմների ներդրում, ռազմավարական փաստաթղթերի կազմում: «Հայաստանի հեռավոր և փոքր համայնքներում կոշտ թափոնների կառավարման լուծումներ» ծրագրի շրջանակներում (Ասիական զարգացման բանկի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, COWI A/S դանիական խորհրդատվական ընկերության համատեղ ուժերով և Ճապոնիայի կառավարության աղքատության նվազեցման հիմնադրամի ֆինանսավորմամբ) աղբահանության կազմակերպում բնակավայրում և հանգստյան գոտիներում:

Գորիս համայնքի զարգացման հիմնական խոչընդոտներից է բաց մեքենաներով աղբահանությունը, գլխավոր աղբավայրի ցանկապատման անհրաժեշտությունը, նոր, ժամանակակից չափանիշներին համապատասխանող աղբավայրի հիմնման անհրաժեշտությունը, աղբ թափելու մշակույթի բացակայությունը, աղբատար մեքենաների ու աղբամանների սակավությունը, անօրինական աղբաթափումը, աղբի տեսակավորման/վերամշակման բացակայությունը:

Համայնքի 2020թ և 2021թ. բյուջեի վերաբերյալ

Ըստ Սյունքի մարզպետարանի կայքի⁷ Գորիս համայնքի բյուջեի **2020թ. եկամտային մասը** կազմել է ընդամենը 1 580 048,6 հազ. դրամ (1 018 013,2 հազ. դրամ՝ վարչական մաս, 562 035,4 հազ. դրամ՝ ֆոնդային մաս), որից սեփական եկամուտներ՝ 250 240,0 հազ. դրամ (գույքահարկ՝ 85 900,0 հազ. դրամ, հողի հարկ՝

⁷ <http://syunik.mtad.am/community-budgetary-revenues/>

23000,0 հազ. դրամ, համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ՝ 7500,00 դրամ): Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից՝ 0 դրամ: Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից՝ 0 դրամ: Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ՝ 7500,0 հազ. դրամ: Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ՝ 0 դրամ: Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)՝ 9 602,5 հազ. դրամ: Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից՝ 472 035,4 հազ. դրամ:

Գորիս համայնքի 2021թ. բյուջեի եկամտային մասը կազմում է ընդամենը 1 675 377,0 հազ. դրամ (1205517,0 հազ. դրամ՝ վարչական մաս, 469860,0 հազ. դրամ՝ ֆոնդային մաս), որից սեփական եկամուտներ՝ 235190,0 հազ. դրամ (գույքահարկ՝ 84700,0 հազ. դրամ, հողի հարկ՝ 23000,0 հազ. դրամ.....), համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ՝ 7500,0 հազ. դրամ: Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից՝ 0 դրամ: Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից՝ 0 դրամ: Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ՝ 957249,2 հազ. դրամ: Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ՝ 0 դրամ: Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)՝ 9 602,5 հազ. դրամ, կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ, ստացված կառավարման այլ մակարդակներից, 399 860,0 հազ. դրամ:

2020թ. Գորիս համայնքում իրականացվել են հետևյալ ծրագրերը՝

1. «Կապտածի և ջրագծի կառուցում՝ Գորիս համայնքի Վերիշեն բնակավայրում», ծրագրի արժեքը՝ 90 900 000 ՀՀ դրամ, ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման չափը՝ 59 930 193 ՀՀ դրամ:

2021թ. հաստատվել են հետևյալ ծրագրերը՝

1. «Գորիս համայնքի «Գորիսի-Վերիշեն-Ակներ ավտոճանապարհի 1379 մ. հատվածի ասֆալտապատման աշխատանքներ» ծրագրի ընդհանուր արժեքը՝ 294928286 դրամ, համայնքի ներդրումը՝ 162210557 դրամ, պետական ներդրումը՝ 132717729 դրամ:

2. «Գորիս համայնքի Արտաշեսյան փողոցի 960 մ հատվածի ասֆալտապատման աշխատանքներ» ծրագրի ընդհանուր արժեքը՝ 228288968 դրամ, համայնքի ներդրումը՝ 125558932 դրամ, պետական ներդրումը՝ 102730036,0 դրամ:

3. Գորիս համայնքի «Մաշտոցի փողոցի 230մ հատվածի և Դիտակետի ճեմուղու 450մ հատվածի ասֆալտապատում» ծրագրի ընդհանուր արժեքը՝ 127401713 դրամ, համայնքի ներդրումը՝ 70070942 դրամ, պետական ներդրումը՝ 57330771,0 դրամ:

Ազդակիր Գորիս համայնքում գործող բիզնեսի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում կատարված աշխատանքների/ծրագրերի մասին

I. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ –ն 2017-2021թթ. իրականացրել է հետևյալ սոցիալական ծրագրերը՝

2017թ.

1. «ԲԳՀԿ Գորիսի գրասենյակին հարակից բակային ֆուտբոլի դաշտի արդիականացում/վերականգնում», ծրագրի արժեքը՝ 4,913 հազ. դրամ:
2. «Սյունիք» պարային համույթին ազգային տարազների նվիրաբերում» (48 ազգային տարազների նվիրաբերում), ծրագրի արժեքը՝ 2,750 հազ. դրամ:

2018թ.

1. «Աջակցություն Ազգային Գեղագիտության Կենտրոնին» (գեղագիտության կենտրոնի վերանորոգում) ծրագրի արժեքը՝ 2,600 հազ. դրամ:
2. «Մշակութային հաղորդակցության կենտրոնի ստեղծում Հին Գորիս պատմական արգելոցում», արժեքը՝ 3.600 հազ. դրամ:
3. «Վ. Սարգսյանի անվան թիվ 1 ՆՌԻՀ-ի գուգարանների վերանորոգում», ծրագրի արժեքը՝ 6,171 հազ. դրամ:
4. «Համայնքային գրադարանին գրքերի նվիրաբերում» (116 անուն գրականության նվիրաբերում) ծրագրի արժեքը՝ 486 հազ. դրամ:
5. «Վ. Սարգսյանի անվան թիվ 1 ՆՌԻՀ-ին անհրաժեշտ կահույքի նվիրաբերում», (1 խոհանոցային լվացարանի սեղանով և 5 պահարանների նվիրաբերում) ծրագրի արժեքը՝ 415 հազ. դրամ:
6. «Գորիս համայնքի Քարահունջ բնակավայրի հիմնական դպրոցին պրոեկտորի և էկրանի նվիրաբերում» ծրագրի արժեքը՝ 381 հազ. դրամ:
7. «Էկոպայուսակների տպագրություն բնապահպանական իրազեկման արշավի համար» ծրագրի արժեքը՝ 479 հազ. դրամ:
8. «Գորիսի մանկապատանեկան մարզադպրոցին անհրաժեշտ սպորտային գույքի նվիրաբերում» (4 մարմնամարզական մատրասների, 10 ֆուտբոլի գնդակների, 2 մարզական պարկերի, 1 սեղանի թենիսի դաշտի, 1 երկար մարզական պարանի և 1 100կգ-ոց ծանրաձողի նվիրաբերում) ծրագրի արժեքը՝ 484 հազ. դրամ:
9. «Գրենական պիտույքների ձեռք բերում IQ կենտրոնի համար» ծրագրի արժեքը՝ 108 հազ. դրամ:
10. «Աջակցություն «Մաքուր Գորիս» ՀԿ-ին» (բնապահպանական մրցույթի մասնակիցներին էկոպայուսակների և բնապահպանական բրոշյուրների նվիրաբերում) ծրագրի արժեքը՝ 123 հազ. դրամ:
11. Ծառատունկ, ծրագրի արժեքը՝ 460 հազ. դրամ:

2019թ.

1. «Աջակցություն կանանց ֆուտբոլի թիմին» (ամառային և ձմեռային սպորտային արտահագուստի, մարզական կոշիկների, պայուսակների նվիրաբերում) ծրագրի արժեքը՝ 3,097 հազ. դրամ:
2. «Սպորտային գույքի նվիրաբերում Գորիսի թիվ 2 միջնակարգ դպրոցին» ծրագրի արժեքը՝ 445 հազ. դրամ:

3. «Աջակցություն ըմբշամարտի ակումբին» (ըմբշամարտի գորգի նվիրաբերում), ծրագրի արժեքը՝ 2,800 հազ. դրամ:

4.«Թիվ 3 հիմնական դպրոցի հատակների վերանորոգում» ծրագրի արժեքը՝ 6,700 հազ. դրամ:

6. «Վերիշենի հիմնական դպրոցի գուգարանների վերանորոգում» ծրագրի արժեքը՝ 2,377 հազ. դրամ:

2020թ.

1.«Թիվ 3 միջնակարգ դպրոցի դռների վերանորոգում» ծրագրի արժեքը՝ 1,159 հազ.դրամ:

2.«Կովիդ-19 աջակցություն հաշմանդամություն ունեցող անձանց (100 սննդի և 100 հիգիենայի փաթեթների նվիրաբերում)» ծրագրի արժեքը՝ 2,733 հազ. դրամ:

3.«Գորիս Բժշկական Կենտրոնին բժշկական սարքավորումների նվիրաբերում» (1 վիդեոլարինգոսկոպի, 10h թթվածնի կոնցենտրատորների և 1 գազ-անալիզատորի նվիրաբերում) ծրագրի արժեքը՝ 13,000 հազ. դրամ:

4.«Կովիդ-19 պաշտպանության հավաքածուներ ՔԳՀԿ աշխատակիցների և նրանց ընտանիքների համար (անհատական պաշտպանական միջոցների և մաքրող միջոցների նվիրաբերում), Գորիս և Սիսիան համայնքներ» ծրագրի արժեքը՝ 5,091հազ. դրամ:

2021թ.

1.«Գորիսի Բժշկական կենտրոն ՓԲԸ ենթակայության Գորիսի պոլիկլինիկայի ընդունարանի և գուգարանների վերանորոգում». ծրագրի արժեքը՝ 12,884 հազ. դրամ, համատեղ EFACEC Engenharia e Sistemas, S.A. (իրականացվել է կապալառու կազմակերպության կողմից՝ համաձայն ՔԳՀԿ Ընկերության հետ կնքված պայմանագրի):

2. «Հայաստանի Ամերիկյան Համալսարանի Բաց Շարունակական Կրթության մարզային կենտրոնի համար նախատեսված տարածքի վերանորոգում, կահավորում և վերազինում, գրադարանի ստեղծում» ծրագրի արժեքը՝ 79,782 հազ. դրամ, համատեղ՝ VOITH Hydro GmbH&Co KG, EFACEC Engenharia e Sistemas, S.A. (իրականացվել է կապալառու կազմակերպության կողմից՝ համաձայն ՔԳՀԿ Ընկերության հետ կնքված պայմանագրի):

3. Աջակցություն Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայանին (սառնարանի, սառցարանի և 2 շարժական սառցարան պայուսակների նվիրաբերում) ծրագրի արժեքը՝ 620 հազ. դրամ:

II. Համայնքի տարածքում 2 ոչ-մետաղական հանքավայր շահագործող կազմակերպություններից 1-ը՝ «Ակներ» ՍՊԸ-ն իր ընդերքօգտագործման պայմանագրերով համայնքի զարգացմանն ուղղված սոցիալական պարտավորություններ չի ստանձնել:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքին համապատասխան ընկերությունների կողմից տրված հարկերի հաշվին համայնքում ծրագրեր չեն իրագործվել, ինչը պայմանավորված է նրանով, որ համայնքի տարածքում գործունեություն իրականացնող ընկերություններն ընդգրկված չեն եղել օրենքով սահմանված կազմակերպությունների ցանկում:

